ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՇԻՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լրացավ աշխարհում առաջին սոցիալիստական պետության վաթսուն տարին։ Պատմական այդ կարճ ժամանակամիջոցում Սովետական Միությունը հսկայական թռիչք է կատարել հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Սոցիալ-տնտեսական ու գաղափարաքաղաքական այդ ընդհանուր վերելքի «կարևորագույն արդյունքը եղավ մեր երկրում կառուցված զարգացած սոցիալիզմի հասարակարգը»[1], որն «այսօր սոցիալական առաջադիմության բարձրագույն նվաճումն է»[2]։

Զարգացած սոցիալիստական հասարակարգի էական բնութագծերից մեկը դինամիկ և համամասնական զարգացումն է։ Այդ հանգամանքն իր արտացոլումը գտավ ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումներում։ Կուսակցության XXV համագումարը կյանքի կոչեց սովետական հասարակության հետագա սոցիալ-տնտեսական համակողմանի ու կայուն առաջընթացի վիթխարի ծրագիր։ 1976—1980 թթ. ընդգրկող այդ ծրագրի իրականացումը «նոր, կարևոր փուլ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների կատարելագործման և նոր մարդու ձևավորման, սոցիալիստական ապրելակերպի զարգացման գործում»[3]։ Ստրատեգիական այդ նպատակների կողքին կուսակցության XXV համագումարը բացառիկ կարևոր տեղ հատկացրեց նաև արդի էկոլոգիական պրոբլեմների լուծմանը՝ շրջապատող միջավայրի պահպանությանը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանն ու դրանց վերարտադրությանը։ Կուսակցության առաջադրած սոցիալ-տնտեսական վիթխարի առաջընթացի ծրագիրն օբյեկտիվորեն հնարավոր է իրականացնել մասնավորապես բնական ռեսուրսների մշտական շահագործման և ընդհանրապես շրջապատող միջավայրի վերափոխման ու օգտագործման շնորհիվ։ Չէ որ բնական ռեսուրսների օգտագործումը հասարակության նյութական արտադրության անհրաժեշտ հիմքն է։ Մինչդեռ առաջնային հումքի նկատմամբ պահանջարկի անընդհատ մեծացումը վերջին հաշվով հանգեցնում է նրան, որ շրջապատող բնական միջավայրի վրա մարդու ներգործությունը տևականորեն աճում է։ Որքան ուժեղանում է մարդու ազդեցությունը բնության վրա, որքան խորն ու ծավալուն է դառնում շրջապատող միջավայրի ներ-

---

1 «ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թվականի հունվարի 31-ի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին», Երևան 1977, էջ 8։

2 Նույն տեղում, էջ 9։

3 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 246։

գրավումը հանրային արտադրության ոլորտը, այնքան մեծանում է այդ պրոցեսներին ուղեկցող բացասական էկոլոգիական հետևանքների առաջացման հավանականությունը[4]։ Առանձին դեպքերում այդ հետևանքների սոցիալական նշանակությունը հակակշռում է բնության վերափոխմանն ուղղված նպատակների սոցիալական նշանակությանը։ Նման պարագաներում էկոլոգիական անցանկալի հետևանքների անտեսումն իրական վտանգ է ստեղծում հասարակության կայուն և համակողմանի զարգացման համար։ Իրոք, անտեսելով էկոլոգիական մերժելի հետևանքները, մենք, փաստորեն, ապահովում ենք միայն կարճատև տնտեսական արդյունավետություն։ Բայց նման աճը զուրկ է ստրատեգիական հնարավորություններից և իրականացվում է սոցիալական արդյունավետության հաշվին, որը և երկարաժամկետ ու ներդաշնակ զարգացման սկզբունքի խախտում է։ Ուստի, եթե հասարակության դինամիկ ու համամասնական սոցիալ-տնտեսական վերելքը դիտվում է որպես ստրատեգիական նպատակ, ապա խիստ նպատակահարմար է ուշադրության կենտրոնում պահել նաև արդի էկոլոգիական պրոբլեմների լուծումը։ Այժմ առավել, քան երբևէ, ակնհայտ է, որ այդ պրոբլեմների ժամանակին և կոմպլեքսային լուծումը նշված իմաստով հասարակական առաջադիմության ապահովման անհրաժեշտ նախադրյալներից է։

Ահա թե ինչու 10-րդ հնգամյակում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական խնդիրներից մեկը կուսակցությունը համարեց շրջապատող միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և դրանց վերարտադրության միջոցառումների մշակումն ու իրականացումը[5]։ Ընդհանուր առմամբ սրանք են այն հիմնական ուղղությունները, որոնցով կուսակցությունը XXV համագումարից հետո իրականացնում է իր էկոլոգիական քաղաքականությունը։ Այդ քաղաքականության նպատակն է կանխատեսել և վերացնել սոցիալական նշանակություն ունեցող բացասական էկոլոգիական հետևանքները։

Այժմ արդեն պարզորոշ սահմանազատվում են էկոլոգիական քաղաքականության իրականացման երկու խոշորագույն ասպարեզները՝ ներպետական և միջպետական հարաբերությունների բնագավառները։ Ինչպես իր գործունեության մյուս ոլորտներում, այնպես էլ էկոլոգիական քաղաքականության մեջ, ՍՄԿԿ-ն ելնում է խիստ որոշակի գաղափարական և դիտական հիմքերից։ Կուսակցության էկոլոգիական քաղաքականությունը խորապես ներթափանցված է սոցիալիստական հասարակարգին ներհատուկ հումանիզմով, որովհետև այդ քաղաքականության խնդիրն է կոմունիզմ կառուցող սովետական մարդու համար բարենպաստ կենսական միջավայրի ստեղծումը։ Գաղափարական այդ պատվանդանը իր արտացոլումը գտավ ՍՍՀՄ նոր սահմանադրության 18 հոդվածում։ Այստեղ մասնավորապես ասված է. «Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից, ՍՍՀՄ-ում անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում հողի ու նրա ընդերքի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի պահպանման և գիտականորեն հիմնավորված, ռացիոնալ օգտագործման հա-

---

4 Հարկ է նշել, որ բնության վերափոխմանն ուղղված մարդկային գործունեության ոչ բոլոր էկոլոգիական հետևանքներն են բացասական, ժխտելի։ Б. М. Смирнов, Влияние человека на атмосферу («Природа», 1977, № 4, стр. 18—19).

5 ՍՄԿԿ XXV համագումարի հաստատած միջոցառումների ծրագրի մասին մանրամասն տե՛ս «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 258—259։

մայ, օդի և ջրի մաքրության պահպանման, բնական հարստությունների վերարտադրության ապահովման և մարդու շրջակա միջավայրի բարելավման համար»։ Ակնհայտ է դառնում, որ կոմունիստական կուսակցության և՛ տնտեսական, և՛ էկոլոգիական քաղաքականության նպատակն է բարձրացնել մարդու նյութական ու կուլտուրական մակարդակը, ապահովել նրա նոր պահանջմունքների բավարարումը։ Այս է բնության պահպանման ուղղությամբ կուսակցության քաղաքականության բուն իմաստը։

Սոցիալիստական էկոլոգիական քաղաքականությունը ունի գիտական ամուր հիմք, որի նշանակությունն անընդհատ աճում է։ Հայտնի է, որ արդի էկոլոգիական իրադրությունը ստեղծվել է ոչ միայն և ոչ այնքան գիտատեխնիկական հեղափոխության պատճառով։ Այստեղ էական դեր է խաղացել ընդհանրապես մարդկային գործունեության զարգացումը արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և շինարարության ասպարեզում։ Այսինքն, արդի գիտատեխնիկական հեղափոխությունը վերջին ժամանակներս սրված էկոլոգիական հակասությունների պատճառներից մեկն է։ Այլ է այդ հեղափոխության դերը նշված հակասությունների վերացման խնդրում։ Քանի որ արդի էկոլոգիական պրոբլեմները շատ ավելի բարդ ու մասշտաբային են, ապա դրանց լուծումը հնարավոր է միայն ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումների հիման վրա։ Այսինքն՝ արդի էկոլոգիական իրադրության հաղթահարումը տեխնոլոգիական իմաստով բացառապես կապված է գիտատեխնիկական հեղափոխության հասարակայնորեն ցանկալի առաջընթացի հետ։ Բայց գիտատեխնիկական հեղափոխության հետագա զարգացման խնդիրը և բնության պահպանության պրոբլեմների լուծումը լոկ տեխնոլոգիական երևույթներ չեն։ Այդ և այլ հարցերում վճռական նշանակություն ունի հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքը։ «Մենք՝ կոմունիստներս, ելնում ենք այն բանից, որ միայն սոցիալիզմի պայմաններում է գիտատեխնիկական հեղաշրջումը ստանում ճիշտ, մարդու և հասարակության շահերին համապատասխանող ուղղություն,— ՍՄԿԿ XXV համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը։— Իր հերթին, միայն գիտության ու տեխնիկայի առավել արագ զարգացման հիման վրա կարող են լուծվել սոցիալական հեղափոխության վերջնական խնդիրները, կարող է կառուցվել կոմունիստական հասարակարգ»[6]։ Ասվեց, որ սովետական հասարակարգի հետագա առաջընթացը պայմանավորված է նաև էկոլոգիական պրոբլեմների լուծմամբ, ուստի կուսակցության XXV համագումարի եզրակացությունն ամբողջովին տարածվում է նաև էկոլոգիական քաղաքականության վրա։ Սակայն բնությունից օգտվելու սոցիալիստական եղանակի բարելավումը պայմանավորված է ոչ միայն գիտատեխնիկական նվաճումները պրակտիկայում արմատավորելու հետ։ Ներպետական բնագավառում էկոլոգիական քաղաքականության կարևորագույն խնդիրների թվում են հանրային արտադրության արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսության ֆունկցիաների ընդլայնումը, տնտեսական մեխանիզմի վերակառուցումը, իրավագիտության զարգացումը, պրոպագանդիստական աշխատանքի կատարելագործումը։

Զարգացած սոցիալիստական հասարակարգում գիտական պատկերացումներով ղեկավարվելու օբյեկտիվ պահանջը պլանաչափորեն մուտք է գործում

---

6 Նույն տեղում, էջ 70։

բնության վերափոխմանն ուղղված գործունեության կազմակերպման ու իրականացման բնագավառ։ Այսպես, օրինակ, 10-րդ հնգամյակում նախատեսվում է կազմակերպել այնպիսի մի կարևոր պրոբլեմի գիտական հետազոտությունը, ինչպիսին է հյուսիսի և Սիբիրի գետերի հոսքի մի մասի փոխադրումը Վոլգայի ավազան, Ղազախստան և Միջին Ասիա։ Հարկ է պարզել էկոլոգիական այն հետևանքները, որպիսիք ի հայտ կգան ջրային հաշվեկշռի վերաբաշխման դեպքում։ Այս առումով հատկանշական է Ստորին Օբի ՀԷԿ-ի կառուցման ծրագրից հրաժարումը։ Պարզվել է, որ այդ հիդրոէլեկտրակայանի աշխատանքի համար կուտակվելիք ջրային զանգվածի ծանրության տակ Արևմտասիբիրական հարթավայրի հյուսիսային շրջանում երկրակեղևը նստվածք կտար։ Եվ քանի որ ընդգետնյա ջրերը գտնվում են մակերեսից ընդամենը 0,3—1,5 մ խորության վրա, ապա երկրակեղևի թեկուզև աննշան խորասուզումն առաջ կբերեր հսկայական տարածությունների ջրածածկում և ճահճացում։ Սրանք իրենց հերթին է՛լ ավելի կբարդացնեին հիշյալ շրջանում նավթի և գազի արդյունահանումը։ Նկատի ունենալով ջրակառույցի հետ կապված անցանկալի էկոլոգիական հետևանքների սոցիալական նշանակությունը, ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը մերժվել է[7]։

Շրջապատող միջավայրի պահպանության հատուկ միջոցառումների շարքում կարևորագույն դեր է կատարում ժամանակակից տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործումը, որը վերջին հաշվով հանգում է նյութական արտադրության էկոլոգացմանը։ 10-րդ հնգամյակում «պրակտիկայում կիրառում կստանան մթնոլորտ արտազատվող վնասակար նյութերի դեմ պայքարելու նոր մեթոդներ ու միջոցներ, միջոցառումներ կնախատեսվեն ջրային և անտառային ռեսուրսների կոմպլեքսային և ռացիոնալ օգտագործման և պահպանության նպատակով։ Արտադրության բոլոր ճյուղերում անցում կկատարվի շրջանառու ջրի օգտագործմանը։ Օրինակ, քիմիական արդյունաբերության մեջ, չնայած արտադրության ծավալի զգալի աճին[8], կկրճատվի արդյունաբերական կեղտաջրերի թափումը ջրամբարների մեջ և վնասակար նյութերի արտազատումը մթնոլորտ, իսկ արտադրության կարիքների համար թարմ ջրի ծախսումը 1980 թվականին կմնա 1975 թվականի մակարդակին»[9]։

Կուսակցության XXV համագումարում արծարծվեց նաև հանրային արտադրության և էկոլոգիական պրոբլեմների կապի հարցը։ Այս հարցում կուսակցությունը ելնում է այն բանից, որ 10-րդ հնգամյակի գլխավոր առանձնահատկություններից մեկը՝ հանրային արտադրության արդյունավետության բարձրացումը, բնության պահպանման անհրաժեշտ նախապայմաններից է։ «Տնտեսական պոտենցիալի և աշխատավորների բարեկեցության աճի արագ տեմպերի պայմաններում շրջակա միջավայրի պահպանության համար միջոցներ կարող են ստացվել միայն արտադրության արդյունավետության բարձրացման հաշվին»[10],—համագումարում շեշտեց Լ. Ի. Բրեժնևը։ Ընթացիկ հնգամ-

---

[7] Այս մասին տե՛ս «Известия», 28.VII.1977.

[8] «1980 թվականին հանքային պարարտանյութերի արտադրությունը կհասնի 143 միլիոն տոննայի՝ 1,6 անգամ ավելի, քան 1975 թվականին։ Ավելի քան երկու անգամ կավելանա պոլիմերային նյութերի առավել առաջադիմական տեսակների թողարկումը։ Առավել արագ տեմպերով կաճի սինթետիկ կաուչուկների և մանրաթելերի արտադրությունը» («ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 210)։

[9] Նույն տեղում, էջ 211։

[10] Նույն տեղում, էջ 65։

յակում շրջապատող միջավայրի պահպանության նպատակների համար հատկացվել է 11 միլիարդ ռուբլի[11]։

Կուսակցության XXV համագումարն անդրադարձավ նաև գյուղատնտեսության և բնության պահպանության փոխհարաբերությանը։ Խոսքն ըստ էության գյուղատնտեսության ֆունկցիաների ընդլայնման մասին է։ «Գյուղատնտեսությանը մենք՝ կոմունիզմ կառուցողներս,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— պետք է մոտենանք ևս մի՝ շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից»[12]։ Այս կապակցությամբ ՍՄԿԿ XXV համագումարում արված հիմնական եզրակացությունն այն է, որ միայն մեր սոցիալիստական ուղին է հնարավորություն ընձեռում, որպեսզի գյուղատնտեսությունը դառնա կենդանի բնական հարստությունների պահպանման, մշակման մի հսկայական, մշտական գործող մեխանիզմ[13]։

Սակայն չպետք է կարծել, որ սոցիալիզմի պայմաններում բնությունից օգտվելու հետ կապված բոլոր խնդիրներն արմատապես լուծված են։ Գիտության, տեխնոլոգիայի և հանրային արտադրության բնագավառներում էկոլոգիական քաղաքականության առանձին ասպեկտների պարզաբանումը բավարար չէ բնության պահպանության աշխատանքների կազմակերպման և իրականացման համար։ Այս տեսակետից կարևոր է հատկապես տնտեսական մեխանիզմի վերակառուցումը, որը, միաժամանակ, ողջ ժողովրդական տնտեսության հավասարակշռվածության և համամասնության ապահովման լծակներից է։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ ամենը կապ չունի էկոլոգիական քաղաքականության հետ։ Մինչդեռ հայտնի է, որ բնության պահպանման գործը հանգում է մարդու վերափոխիչ գործունեության անմիջական և միջնորդավորված անցանկալի էկոլոգիական հետևանքների հաշվառմանն ու վերացմանը։ Հաճախ բնական միջավայրում անցանկալի պրոցեսներ են առաջանում այն ժամանակ, երբ արտադրության ոլորտում ուշադրությունը սևեռվում է միայն անմիջական, ցանկալի արդյունքների ստացմանը։ Մարդկային գործունեությանն ուղեկցող բազմաթիվ հետևանքներ փաստորեն հաշվի չեն առնվում արտադրական և պլանավորող մարմինների կողմից։ Ձգտելով կանխել նման անցանկալի երևույթները և տնտեսության կառավարման մեխանիզմը համապատասխանեցնել գիտատեխնիկական հեղափոխության օբյեկտիվ պահանջներին, կուսակցության XXV համագումարն առաջ քաշեց էկոլոգիական քաղաքականության համար արմատական նշանակություն ունեցող հետևյալ պահանջը. «Կառավարչական ու նախ և առաջ պլանային գործունեությունը պետք է նպատակամղված լինի վերջնական ժողովրդատնտեսական արդյունքներին... միջանկյալ արդյունքների հետևից ընկնելով, որոնք ինքնըստինքյան դեռևս չեն լուծում խնդիրը, հեշտությամբ կարելի է ձեռքից բաց թողնել գլխավորը՝ վերջնական արդյունքները։ Եվ, ընդհակառակը, պատշաճ ուշադրություն չդարձնելով ինչ-որ միջանկյալ օղակների վրա, կարելի է ձախողել մեծ ջանքերի ու ներդրումների վերջնական, գումարային արդյունքը»[14]։ Կուսակցության այս պահանջը պետք է դառնա բնության վերափոխման ու պահպանման նպատակով ձեռնարկվող ամեն մի գործունեության կազմակերպման ու իրա-

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 79։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, էջ 88։

կանացման ուղենիշը։ Դրանով պետք է ղեկավարվեն և՛ հանրային արտադրության, և՛ նախագծային ու շինարարական, և՛, որ ամենագլխավորն է, էկոլոգիական պրոբլեմների լուծմամբ զբաղվող մարմինները։ Դա նշանակում է էկոլոգիական պրոպագանդան տանել միակ ճիշտ ուղղությամբ՝ սովետական քաղաքացու մոտ արմատավորելով պատասխանատվության զգացում ոչ միայն անմիջական արդյունքների ստացման, այլև հասարակական նշանակություն ունեցող հետևանքների կանխման նկատմամբ։ Պատասխանատվության նման ըմբռնումն անհրաժեշտ է, որպեսզի ՍՍՀՄ քաղաքացիները կատարեն իրենց սահմանադրական պարտականություններից մեկը՝ բնության, նրա հարստությունների պահպանումը (հոդված 67)։

Իհարկե, համակողմանի չի կարող լինել այն էկոլոգիական քաղաքականությունը, որը չի դիմում իրավական նորմերի կատարելագործմանը։ «Մենք,— շեշտեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXV համագումարում,—իրավական նորմերը համապատասխանեցրինք մեր հասարակության ձեռք բերած նոր մակարդակին։ Նախապատրաստվեցին կյանքի այնպիսի ոլորտներին վերաբերող օրենսդրություններ, որոնք նախկինում դուրս էին մնում իրավական կարգավորման շրջանակներից, ինչպես օրինակ, շրջակա միջավայրի, այդ թվում՝ ջրամբարների, ընդերքի, օդային տարածության պահպանությունը և այլն»[15]։ Անշուշտ, վիթխարի է բնության պահպանության վերաբերյալ օրենսդրության դերն արդի էկոլոգիական խնդիրների լուծման խնդրում։ Առանց էկոլոգիական զարգացած օրենսդրության խոսք չի կարող լինել գործողության սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու մասին։ Այդ իսկ պատճառով «մարդ-բնական միջավայր» պրոբլեմի իրավական կարգավորումը օրինաչափորեն դառնում է զարգացած սոցիալիզմի պետության կարևորագույն ֆունկցիաներից մեկի՝ շրջապատող միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման անքակտելի մասը[16]։

Բացի ներպետական բնագավառի վերոհիշյալ խնդիրներից, էկոլոգիական քաղաքականությունն ունի նաև միջազգային հարաբերությունների ոլորտին առնչվող հարցեր՝ փոխշահավետ էկոլոգիական համագործակցության զարգացումը և էկոլոգիական պրոբլեմների շուրջը մղվող գաղափարական պայքարի սրումը տարբեր սոցիալ-տնտեսական կարգեր ունեցող երկրների միջև։

Էկոլոգիական համագործակցության զարգացումը պայմանավորված է բնական և սոցիալական գործոններով։ Բնական գործոնը մեր մոլորակի էկոսֆերայի ֆիզիկական միասնությունն ու անբաժանելիությունն է։ Իսկ սոցիալական գործոնը ինչպես մարդկության, այնպես էլ յուրաքանչյուր պետության շահերի ապահովման անհրաժեշտությունն է։ Էկոլոգիական պրոբլեմներն իրավամբ կարելի է համարել համապարփակ, քանի որ դրանց միայն միջազգային մասշտաբով լուծումը հնարավորություն կտա մարդկությանը՝ խուսափելու համամոլորակային հնարավոր ճգնաժամից։ Այս հարցում ՍՄԿԿ դիրքորոշումը միանգամայն հստակ է։ «Արդեն այսօր բավականաչափ կարևոր ու հրատապ են այնպիսի համապարփակ պրոբլեմներ, ինչպիսիք են հումքի կամ էներգետիկայի պրոբլեմը, առավել վտանգավոր ու տարածված հիվանդու-

15 Նույն տեղում, էջ 123։

16 Զարգացած սոցիալիզմի պայմաններում պետության ֆունկցիաների մասին տե՛ս Е. М. Ковешников, XXV съезд КПСС и вопросы государства развитого социализма, М., 1977, стр. 39—58.

թյունների վերացումը և շրջակա միջավայրի պահպանությունը, տիեզերքի յուրացումը և համաշխարհային օվկիանոսի ռեսուրսների օգտագործումը։ Հեռանկարային առումով դրանք հետզհետե ավելի նկատելի ազդեցություն կթողնեն յուրաքանչյուր ժողովրդի կյանքի վրա, միջազգային հարաբերությունների ամբողջ սիստեմի վրա։ Մեր երկիրը, ինչպես և սոցիալիզմի մյուս երկրները, չի կարող մի կողմ կանգնել ողջ մարդկության շահերը շոշափող այդ պրոբլեմների լուծումից»[17]։

Բնական միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ու վերարտադրության ասպարեզում միջազգային համագործակցությունն անհրաժեշտ է նաև առանձին երկրների էկոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից[18]։ Մեր մոլորակի կենսոլորտի միասնության և անբաժանելիության պայմաններում «այս կամ այն երկրում բնական միջավայրը շոշափող համեմատաբար խոշոր մասշտաբի ցանկացած գործունեություն մեր ժամանակներում որոշակի պայմաններում ստանում է միջազգային նշանակություն»[19]։

1970-ական թվականներից սկսած, կապիտալիստական և սոցիալիստական երկրների միջև էկոլոգիական համագործակցությունը գնալով զարգանում է։ Այդ բնագավառում ամենամասշտարային համաձայնագիրը ստորագրվել է Մոսկվայում, 1972 թ. մայիսի 23-ին՝ Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև։

Բոլորովին չնսեմացնելով բնության պահպանության բնագավառում միջազգային համագործակցության դերը, չպետք է մոռանալ, որ էկոլոգիական պրոբլեմների լուծման մեջ վճռականը հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքն է։ Այդ հարցում պահանջվում է հանգամանորեն հաշվի առնել հասարակական ընդհանուր շահերը, քանի որ բուն էկոլոգիական հետևանքները համահասարակական բնույթ ունեն։ Արտադրամիջոցները հանրային սեփականություն դիտող հասարակարգում միայն, ուր տնտեսությունը զարգանում է պլանային սիստեմով, ստեղծվում են էկոլոգիական հակասությունների արմատական լուծմանը նպաստող հնարավորություններ։ Կապիտալիստական երկրների էկոլոգիական առանձին միջոցառումները հաճախ հանդիպում են մոնոպոլիաների դիմադրությանը։ Վերջիններս ամենևին էլ հաշվի չեն առնում հասարակության ընդհանուր շահերը։ Սխալ կլիներ կարծել, թե մոնոպոլիստները չեն գիտակցում այդ շահերը։ Սակայն կապիտալիստական հասարակարգի տնտեսական օրենքները թույլ չեն տալիս կյանքի կոչել տնտեսական շահույթ չապահովող ձեռնարկումներ։ Կապիտալ ներդրումներ կատարելով բնական միջավայրի պահպանման նպատակով, ձեռնարկատերն. օբյեկտիվորեն, բարձրացնում է ապրանքի ինքնարժեքը, որը կապիտալիստական մրցակցության պայմաններում միանգամայն անընդունելի է։ Մոնոպոլիաների առավելագույն շահույթ ապահովելու ձգտումը ձախողում է բնության պահպանու-

---

17 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 84։

18 Էկոլոգիական անվտանգության ապահովումը «յուրաքանչյուր երկրի օրինական ձգտումն է՝ իր բնական միջավայրը և մարդկանց առողջությունը պաշտպանել վնասից, որը կարող է հասցվել այլ երկրների «հակաէկոլոգիական» գործողությունների հետևանքով» («Проблема окружающей среды в мировой экономике и международных отношениях», М., 1976, стр. 81—82).

19 Նույն տեղում, էջ 82։

թյան՝ բուրժուական պետության փորձերը։ Այս տեսակետից թերևս ամենացայտուն փաստը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախկին պրեզիդենտ Ջ. Ֆորդի հրամանն է՝ մեղմացնել էկոլոգիական օրենքների կիրառումը, որպեսզի ամերիկյան մոնոպոլիաները շահագրգռված լինեն էներգետիկ հումքի արդյունահանման և վերամշակման խնդրում։ Այսինքն, կապիտալիստական հասարակարգի տնտեսական լծակներն ստիպում են, որ բուրժուական պետությունն անտեսի իր իսկ հռչակած օրենքները։ Դժվար չէ նկատել, որ բուրժուական աշխարհում էկոլոգիական հակասությունների սրման գլխավոր պատճառը մասնավոր և հասարակական շահերի միջև գոյություն ունեցող օբյեկտիվ հակադրությունն է։ «Այնպիսի մի երկրում, ինչպիսին ԱՄՆ-ն է, ուր տիրապետում է աշխատանքի գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, ուր շահույթը պատկանում է մասնավոր մարդկանց, բնությանը չվճարված ծախսերի հետևանքով առաջացած խնայողությունը ձեռնարկատիրոջ օգտին է, այն դեպքում, երբ շրջապատող միջավայրի դեգրադացիայի և բոլոր կործանարար հետևանքների տեսքով ծախսերը դրսևորվում են այլ տեղում»[20],— իրավացիորեն գրում է ամերիկյան հայտնի դիտնական-կենսաբան Բ. Կոմոնները։ Ինչպես տեսնում ենք, կապիտալիստական հասարակարգն իր դարն ապրել է նաև էկոլոգիական առումով և հասունանում են սոցիալիզմին անցնելու էկոլոգիական նախադրյալները։

Այսպիսով, միայն զարգացած սոցիալիզմն է ստեղծում այն անհրաժեշտ դիտական ու սոցիալական հիմքերը, որոնց դեպքում իրականանում է էկոլոգիական ճիշտ քաղաքականությունը։ Դրա գործնական հաստատումը տեսնում ենք Սովետական Հայաստանում, որտեղ հատկապես 10-րդ հնգամյակում բնության պահպանության ուղղությամբ ծավալուն աշխատանքներ են կատարվում։ Մեր հանրապետությունում էկոլոգիական քաղաքականության հիմնական ուղղությունները և կոնկրետ խնդիրները որոշվել են ՀԿԿ XXVI համագումարում։ Այդ ուղղությունները մասնավորապես վերաբերում են շրջապատող բնության այնպիսի կենսական տարրերի պաշտպանությանը, ինչպիսիք են ջուրը, օդը և հողը։ Շրջապատող բնական միջավայրի պահպանման և բարելավման նկատմամբ ցուցաբերվող կուսակցական և պետական հոգատարությունը հաստատվում է այն անժխտելի փաստով, որ էկոլոգիական միջոցառումների մշակման ու իրականացման համար տրամադրվող ֆինանսական միջոցները շարունակ ավելանում են։ 1976—1980 թթ. համար այդ նպատակներով տրամադրվել են շուրջ 600 մլն ռ. կապիտալ ներդրումներ[21]։ Այդ գումարի մեջ մտցված են նաև մելիորատիվ աշխատանքների կատարման համար հատկացված ծախսերը։

Շուրջ 600 մլն. ռ. կապիտալ ներդրումներից 125 միլիոնը տրամադրված է Հանրապետության ջրային պրոբլեմների լուծմանը։ Ջրային պաշարներով աղքատ մեր հանրապետությունում ևս հանրային արտադրության բուռն զարգացումն անհրաժեշտաբար ուղեկցվում է տեխնոլոգիական նպատակներով ջրի օգտագործման մեծացմամբ։ Խնդիրը բարդանում է նրանով, որ այդ նպատակով օգտագործված ջուրը գերազանցապես ապականվում է։ Այս բնագավառում էկոլոգիական քաղաքականությունը կոչված է լուծելու երկու հարց. ա) ջրա-

---

[20] Б. Коммонер, Технология прибыли, М., 1976, стр. 71.

[21] «Սովետական Հայաստան», 20. X. 1977։

անգրադարձ տեխնոլոգիական պրոցեսների արմատավորում ու տարածում, ր) մաքրման կայանների լայն ցանցի ստեղծում։ Առաջին հարցի լուծման հետ նույնված կոնկրետ խնդիրները հանգում են շրջադարձ փակ ջրամատակարարման համակարգեր ստեղծելուն («Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում, Կիրովականի քիմիական, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատներում, Երևանի «Պոլիվինիլացետատ» և ավտոդողերի գործարաններում)։ Հաշվարկված է, որ նոր տեխնոլոգիական պրոցեսների ներդրմամբ ջրի շրջադարձ օգտագործումը կավելանա 70%-ով։

Ջրի պահպանման հետ կապված երկրորդ հարցի լուծման խնդիրների թվում են Երևանի ալյումինի կայանի երկրորդ հերթի[22] և Սևան-Հրազդան կոլեկտորի շինարարությունը։ Մաքրման կայաններ են կառուցվելու նաև հանրապետության մյուս քաղաքներում ու շրջկենտրոններում։ Ավարտվելու են Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի, Երևանի ալյումինի գործարանի մաքրման կայանների և Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչակների պահեստարանի շինարարությունը։ Իսկ քիմիական ու նավթաքիմիական արդյունաբերության ձեռնարկությունների կեղտաջրերի չեզոքացմամբ հնարավորություն կստեղծվի դադարեցնել դրանց հոսքը Դեբեդ, Ողջի գետերը և Սևանա լիճը[23]։

Սովետական Հայաստանում ջրային ռեսուրսների պրոբլեմի լուծման գործում առանձնահատուկ նշանակություն ունի Սևանա լճի ջրային պաշարների պահպանությունը։ Սևանի օրինակը վկայում է, թե հեռանկարային էկոլոգիական քաղաքականություն վարելու տեսանկյունից որքան կարևոր է բնության պահպանության հարցերի նկատմամբ կոմպլեքսային մոտեցումը։ Սևանի ջրերը տարիներ առաջ դիտվել են որպես հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ստացման միակ խոշոր աղբյուր։ Ուստի, լճի ջրային պաշարների անխնա օգտագործումը եղել է տնտեսապես միանգամայն նպատակահարմար։ Բայց այսօր մենք ականատեսն ենք այն անցանկալի միջնորդավորված հետևանքների, որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ժամանակին հաշվի չեն առնվել։ Հայտնի է, որ Սևանա լճի մակարդակը բնականից արդեն իջեցվել է 18 մ։ Էկոլոգիական և ժողովրդատնտեսական (ոռոգման ու էներգետիկ) տեսանկյունից խիստ անցանկալի այդ երևույթը չէր կարող անտարբերության մատնվել։ Տարիներ առաջ, հստակ գիտակցելով Սևանին և հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմանը սպառնացող վտանգի մասշտաբները, սովետական կառավարությունը միլիոնավոր ռուբլիների հասնող կապիտալ ներդրումներ կատարեց Արփա-Սևան ջրատարի կառուցման համար։ Այդ ջրատարի շնորհիվ լճի մակարդակը պահպանվելու է բնականից 19—20 մ ցածր մակարդակի վրա։ Այդ դեպքում լճի մակերեսը կազմելու է բնական մակարդակի 86,5%-ը,

---

22 Այստեղ անհրաժեշտ է մի լրացում։ Ատոմային էներգետիկայի քաղաքային կայանի նեղկա վիճակը տագնապ է հարուցում։ Տակավին լուծված չեն նախագծային և շինարարական մի շարք կարևոր խնդիրներ, որոնց պատճառով ավարտված կառույցները չեն դիմանում շրի ճնշմանը, բացակայում է կենսաբանական մաքրման հնարավորությունը (այս մասին տե՛ս «Գրական. թերթ», 24. VI. 1977)։

23 Գ. Ա. Արզումանյան, «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» ՍՄԿԿ Կենտկոմի նախագծի մասին (զեկուցում ՀԿԿ XXVI համագումարում, 1976 թվականի հունվարի 21-ին), Երևան, 1976, էջ 68։

առավելագույն խորությունը՝ 80 %-ը, իսկ ջրի պաշարների ծավալը՝ 56 %-ը[24]։ Հաշվարկված է, որ այդ դեպքում լճի ջրային հաշվեկշիռը կունենա հետևյալ պատկերը. մուտքը՝ 1154 մլն մ³, իսկ ելքը՝ (գոլորշիացման և ստորգետնյա հոսքերի ձևով) 984 մլն մ³։ Պարզ է, որ լճից սկիզբ առնող միակ գետի՝ Հրազդանի, աղատ հոսքի պաշարը կկազմի ավազանում ջրի մուտքի և ելքի[25] տարբերությունը՝ 170 մլն մ³։ Բայց Սևանի նշված մակարդակը պահելով հանդերձ, անհրաժեշտ է շարունակել ոռոգման և էներգետիկ պահանջմունքների բավարարումը։ Այդ նպատակով լճից վերցվող ջրի տարեկան նվազագույն քանակությունը 500 մլն մ³ է։ Այստեղից էլ ծագում է լրացուցիչ ավելի քան 300 մլն մ³ ջուր հայթայթելու խնդիրը, որը թույլ կտար լճի մակարդակի հետագա իջեցումը դադարեցնելով հանդերձ՝ բավարարել գյուղատնտեսության և արդյունաբերության պահանջմունքները։ Միայն այդ նպատակին է ծառայում Արփա-Սևան ջրատարի կառուցումը։ «Արփայից Սևանա լիճ տարեկան կփոխադրվի 250—300 միլիոն խ. մ., այնքան, որքան պահանջվում է Սևանա լճի մակարդակի իջեցումը դադարեցնելու, Հրազդանի կասկադի և ոռոգիչ սիստեմի՝ ջրի նկատմամբ ունեցած նվազագույն կարիքները բավարարելու համար»[26]։

Սակայն, որքան էլ անհավանական թվա, Արփայի ջրերով Սևանի պրոբլեմը չի լուծվում, քանի որ այժմ ծառացել է կապտականաչավուն ջրիմուռներից լճի մաքրման անհրաժեշտությունը։ Ջրի մակարդակի կայունացումը բնականից 19—20 մ ցածր նիշի վրա լճի «ծաղկման» դեմ պայքարի տեսանկյունից գործնական նշանակություն չի ունենա, որովհետև Սևանի մակարդակը կայունացվում է հենց այն նիշում, որի դեպքում է սկսվել ջրավազանի «ծաղկման» պրոցեսը[27]։

Իրականում Սևանը պահպանելու հաջորդ քայլը լիճը կեղտաջրերից ու թունավորումից զերծ պահելն է, որովհետև դրանք սնուցիչ միջավայր են ստեղծում կապտականաչավուն ջրիմուռների արագ բազմացման համար։ Այստեղից էլ Սևան-Հրազդան կոլեկտորի կառուցման բացառիկ սկզբունքային նշանակությունը։ Այսպիսով, Սևանի պահպանման պրոբլեմի լուծման կոմպլեքսայնությունը հանգում է լճի ջրի մակարդակի պահպանմանը և ապականման լրիվ դադարեցմանը։

Հայաստանում բնության պահպանության մյուս կարևոր պրոբլեմը հանրապետության օդային ավազանը թունավորումից զերծ պահելն է։ Այդ նպատակով 10-րդ հնգամյակում արտադրության ոլորտից հանվելու են մթնոլորտն ապականող առավել վտանգավոր տեխնոլոգիական պրոցեսները։ Օրինակ, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման կարբիդի արտադրամասն ամբողջովին փակվելու է[28]։ Հին տեխնոլոգիական պրոցեսները փոխարինվելու են

---

24 «Советский Союз. Географическое описание в 22 томах. Армения», М., 1966, стр. 280.

25 Նույն տեղում, էջ 281։

26 Նույն տեղում։

27 «Լճի մակարդակի իջեցման հետևանքով Մեծ Սևանի հատակը լուսավորվում է արևի ճառագայթներով, նպաստավոր պայմաններ են ստեղծվել ջրիմուռների զարգացման համար, այսինքն՝ լճում ճահճակալման պրոցես է սկսվել, շատ անցանկալի մի երևույթ» («Գարուն», 1977, № 6, էջ 54)։

28 «Коммунист», 21.X.1977.

էկոլոգիական տեսանկյունից ցանկալի լուծումներով։ Օդային ավազանը մաքուր պահելու հարցում խիստ կարևոր է նաև արտադրության պրոցեսում մթնոլորտ արտանետվող գազերի և փոշու կորզումը։ Այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվելու Երևանի, Կիրովականի, Ալավերդու, Արարատի և այլ քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններում։ Դրա շնորհիվ գազը և փոշին մի կողմից դառնալու են երկրորդային հումք, իսկ մյուս կողմից այլևս չեն ապականելու շրջապատող միջավայրը։ Հանրապետության օդային ավազանի մաքրության պահպանման նպատակով 10-րդ հնգամյակում հատկացված գումարը կազմում է 25 մլն ռ.[29]։

Մեր հանրապետությունում էկոլոգիական քաղաքականության մյուս հիմնական ուղղությունը հողերը էռոզիայից պաշտպանելն է։ ՀԿԿ XXVI համագումարում ասվեց, որ միջոցառումների լայն համակարգ է նախատեսված 320 հազար հա հողային տարածությունների էռոզիան կանխելու համար։ Այդ նպատակով անտառապաշտպան շերտն ավելանալու է 2500 հա-ով։ Ընթացիկ հնգամյակում Հայաստանում հողերի պահպանման աշխատանքների ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմելու է 15 մլն ռ.[30]։

Սովետական Հայաստանի օրինակով վերստին համոզվում ենք, թե որքան մեծ է կուսակցության էկոլոգիական քաղաքականության դերը մեր հասարակության առաջընթացի սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացման խնդրում։ ՍՄԿԿ XXV համագումարի կողմից այդ քաղաքականության հիմքերի և գլխավոր խնդիրների մշակումը տեսական ու գործնական հիմնարար ներդրում է մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում։

XXV СЪЕЗД КПСС И ВОПРОСЫ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

ШИРАЗ МАРТИРОСЯН

Резюме

В поступательном движении к коммунизму развитой социализм ставит громадные стратегические задачи, среди которых важное значение приобретает решение экологических проблем. Для сохранения окружающей среды и рационального использования природных ресурсов нужно проводить научно обоснованную и долголетнюю экологическую политику. XXV съезд КПСС указал на эти основы и сформулировал главные задачи данной политики: внутригосударственные задачи — повышение эффективности общественного производства, расширение функций сельского хозяйства, переустройство экономического механизма, усовершенствование экологического законодательства, повышение уровня пропагандистской работы. Среди межгосударственных задач можно выделить развитие экологического сотрудничества и усиление борьбы с буржуазной идеологией вокруг экологической проблематики.

---

29 «Հայրենիքի ձայն», 12. I. 1977։

30 Նույն տեղում։

Развитой социализм создает все необходимые научные и социальные условия для успешного решения экологических проблем. Это хорошо видно на примере Советской Армении, где намечено в десятой пятилетке решить задачи по охране воды, воздушного бассейна и почвы.

Разработка на XXV съезде КПСС основ и задач социалистической экологической политики является большим теоретическим и практическим вкладом в дело построения коммунизма.